

# «ՄԵՆՔ ... ՈՐԻՍԱՑ ՇԱՀԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՆՔ»

Posted on October 11, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



# Կոմիտասի Նամակը Արշակ Զօպանեանին

Լրագրող

**Սոյն նամակը Նոյն թարմութիւնը կը վայելէ նաեւ այսօր` 100 տարի ետք: Կոմիտաս վարդապետ ապրած ըլլալով Եւրոպա, Պոլիս եւ Արեւելեան (ռուսական) Հայաստանի մէջ, խորապէս հասկցած էր օտարներու` Եւրոպական պետութիւններու, Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի առած քայլերուն ետին թաքնուած սեփական շահերը:- Խմբ.**

## Կոմիտաս վարդապետ, Կ. Պոլիս, Դեկտեմբեր 1912

... Արդ, մեր երկիրն սկզբէն եղել է կռուախնձոր արշաւող ու շրջակայ հզօր պետութեանց աշխարհակալութեան ճանապարհի վերայ և պահել է ցարդ Նոյն վիճակը: Մենք այժմ իրապէս ռուսաց շահի առարկան ենք. մեր երկիրն արդէն որոշուած է, այսօր կամ վաղը ռուս պետութեան բաժին դառնալու: Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ, թեպէտ և երկուքի վերջակէտն էլ Նոյնն է, տարբեր ուղիով միայն: Առաջինն է առաւելագոյնը` ինքնուրոյն ու անկախ լինելով իբր պատուար ցցուել ռուս դիւանագիտութեան առջեւ և երկրորդը` Նուազագոյնը` ապաւինել Քեռի Ռուսին և միաձոյլ հայութիւն սահմանել: Երկուքն էլ Նոյն է, բայց երկրորդն իրագործելի` շահերի Նոյնութեան վերայ հենուելով, իսկ առաջինը անիրագործելի: Ռուս կառավարութիւնը ծայրագոյն արեւելքէն տուժեց, ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմը մնաց...

# Կոմիտասի Նամակը Արշակ Զօպանեանին

Լրագրող

**Սոյն նամակը Նոյն թարմութիւնը կը վայելէ նաեւ այսօր` 100 տարի ետք: Կոմիտաս վարդապետ ապրած ըլլալով Եւրոպա, Պոլիս եւ Արեւելեան (ռուսական) Հայաստանի մէջ, խորապէս հասկցած էր օտարներու` Եւրոպական պետութիւններու, Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի առած քայլերուն ետին թաքնուած սեփական շահերը:- Խմբ.**

## Կոմիտաս վարդապետ, Կ. Պոլիս, Դեկտեմբեր 1912

... Արդ, մեր երկիրն սկզբէն եղել է կռուախնձոր արշաւող ու շրջակայ հզօր պետութեանց

✘ աշխարհակալութեան ճանապարհի վերայ և պահել է ցարդ նոյն վիճակը: Մենք այժմ իրապէս ռուսաց շահի առարկան ենք. մեր երկիրն արդէն որոշուած է, այսօր կամ վաղը ռուս պետութեան բաժին դառնալու: Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ, թեպէտ և երկուքի վերջակէտն էլ նոյնն է, տարբեր ուղիով միայն: Առաջինն է առաւելագոյնը՝ ինքնուրոյն ու անկախ լինելով իբր պատուար ցցուել ռուս դիւանագիտութեան առջեւ և երկրորդը՝ նուազագոյնը՝ ապաւինել Քեռի Ռուսին և միաձոյլ հայութիւն սահմանել: Երկուքն էլ նոյնն է, բայց երկրորդն իրագործելի՝ շահերի նոյնութեան վերայ հենուելով, իսկ առաջինը անիրագործելի: Ռուս կառավարութիւնը ծայրագոյն արեւելքէն տուժեց, ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմը մնաց...

Ես չե՛մ կարող մտքես անցընել, որ ռուս կառավարութիւնը իր շահերը զոհէ մեզ. զի նա չէ կարող թոյլ տալ, որ այս բաժինն աւելի լաւ վիճակ ունենայ, քան իր երկրի հայերը, ուրեմն մի՛շտ ձգտելու է պահել մեզ (եթէ իրան չմիանանք) իրան կարօտ վիճակի մէջ, որպէսզի ապագայ գրաւման ձեռնտու տարր հանդիսանանք, արդէն մեր մեծ ջարդերն ապացոյց են ասածներիս: Ռուս թերթերն էլ ճիշդ այս կէտն է, որ շարունակ շեշտում են, թէ մեր փրկութիւնը կռելու և կոփելու ենք Պետերբուրգի պարիսպներու դռներուն առաջ, ա՛յս էր պնդել ժամանակին Լոռիս Մելիքով Գեորգ Դ. կաթողիկոսին զգուշացնելով (երբ սա ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, փրկութիւնը տեսնելով ու յուսալով տաճիկներէն, գրեթէ բացարձակապէս սպասելիս է եղել տաճիկներին էջմիածնի մէջ): Արդէն քաջ գիտես, որ Անգլիոյ, Ֆրանսիոյ ու Ռուսիոյ միութեան գլխաւոր նպատակն էլ այս էր: Ուրեմն չիք փրկութիւն արտաքոյ Ռուսիոյ: Պետք է նախ բոլոր հայերը խմբուեն մէկ տերութեան, մէկ օրէնքի տակ, աճեն ու զարգանան բարոյապէս և նիւթապէս և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերէ մեզ մեծ ազատութիւնը. շտապելով, առաջինը չառած երկրորդ քայլի դիմելով բոլորովին պիտի կորչենք, տաճիկէն ոչ մի յոյս մի՛ ունենաք, մի՛ սպասէք, նորա ուղեղը քարէ ժայռից է, զարգացման անընդունակ, լոկ փշրուելու համար պիտանի և ոտքի տակը սալահատութեան յարմար:

Չպետք է բաժանուենք, չպե՛տք է խաբուենք Եւրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներէն, միանալու ենք և գործնական ճամբան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայութիւնն ամփոփել ռուսի իշխանութեան տակ, երկրորդ քայլն է տնտեսապէս ու բարոյապէս, զուտ ազգային, առանց օտարէն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդուելու զարգանալ. երրորդ քայլն արդէն ինքը ռուս յեղափոխութիւնն է, որ պիտի անէ, ոչ թէ մենք, իսկ մենք օգտուելու ենք այդ քայլէն, սակայն պատրաստուելով, լեհերու պէս զուտ ազգային շաւիղը բռնելով. եւրոպական մարդկային գաղափարները որքան որ ընտիր են ու փափաքելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բոյսերը մեր ջերմ արեւին տակ կը կիզուեն:

Ես վախ չունիմ, թէ ռուս կառավարութեան մէջ կը հալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիւ մեր ինքնագիտակցութիւնը զարթնած է և եթէ խելօք շարժուենք՝ կը վաստկենք, ես այս կարծիքն ունիմ...

Համբոյր և կարօտով՝  
Քոյդ Կոմիտաս վարդապետ  
1912, Դեկտեմբեր, Կ. Պոլիս

